

ԷԿՈՒՄԵՆԻԿ ԿՅԱՆՔ

«ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ»-Ի 5-ՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ ՊՐԱԳԱՅՈՒՄ

Սույն թվականի հունիսի 22—28-ը Պրագայում գումարվեց «Խաղաղության քրիստոնեական կոնֆերանս»-ի 5-րդ համաժողովը: Համաժողովին ներկա էին աշխարհի հինգ մայրցամաքների 84 երկրներից ժամանած ավելի քան 600 պատգամավորներ, դիտորդներ, լրագրողներ, հյուրեր:

Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ, համաժողովի աշխատանքներին մասնակցում էին Շիրակի թեմի առաջնորդ տ. Նարեկ եպիսկոպոս Շաքարյանը, Մայր Աթոռի միաբան տ. Գրիգորիս վարդապետ Բունիաթյանը և Մայր Աթոռի Գերագույն հոգևոր խորհրդի անդամ տիար Հովհաննես Թոփուզյանը՝ իբրև Հայաստանյայց եկեղեցու ներկայացուցիչներ:

Համաժողովի բացումը կատարեց «Խաղաղության քրիստոնեական կոնֆերանս»-ի նախագահ, Լենինգրադի և Նովգորոդի միտրոպոլիտ Նիկոդիմ արքեպիսկոպոսը ներկաներին ուղղված ողջույնի խոսքով:

Համաժողովին ողջույնի ուղերձներ էին ուղարկել ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահ Ա. Լ. Կոսիգինը, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Կուրդ Վալդհայմը, Չեխոսլովակիայի հանրապետության նախագահ Գուստավ Հուսակը, Ռումինիայի հանրապետության նախագահ Նիկոլայե Չաուշեսկուն, Կուբայի հանրապետության վարչապետ Ֆիդել Կաստրո Ռուսը, Հունգարիայի բանվորական կուսակցության գլխավոր քարտուղար Յանոշ Կադարը, ԳԴՀ-ի միացյալ սոցիալիստական կուսակցության գլխավոր քարտուղար Է. Հոնեկերը, Լեհաստանի կառավարության նախագահ Հ. Յաբլոնսկին, Տանզանիայի հանրապետության նախագահ Մ. Ժ. Նիերան, Լիբերիայի հանրապետության նախագահ Վ. Ռ. Տոլբերտը, Ֆինլանդիայի հանրապետության նախագահ Ուրհո Կեկկոնենը և շուրջ 80 պետական, եկեղեցական բարձրաստիճան այլ անձնավորություններ:

Համաժողովի մասնակիցներին ողջույնի ուղերձներով ողջունել և նրանց աշխատանքներին հաջողություն էին մաղթել նաև Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Տ. Պիմենը, վրաց օրթոդոքս եկեղեցու Պատրիարք-կաթողիկոս Տ. Իլիա Բ-ը, բուլղարական օրթոդոքս եկեղեցու Պատրիարք Տ. Մաքսիմը և այլ բարձրաստիճան եկեղեցականներ:

«Խաղաղության քրիստոնեական կոնֆերանս»-ի 5-րդ համաժողովում ընթերցվեց Նորին Սրբություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի ողջույնի ուղերձը:

Համաժողովի նշանաբանն էր՝ «Աստուծո համերաշխության պատգամը—քրիստոնյաների պայքարը հանուն խաղաղության, արդարության և ազատագրության»: Վերոհիշյալ թեմայով համաժողովում զե-

կուցումներ կարդացին դոկտ. Ռիչարդ Անդրիամանջատոն (Մադագասկար), միտրոպոլիտ Սար Գրիգորիոսը (Հնդկաստան) և Կոլին Վինդերը: Զեկուցողները հանգամանորեն զարգացրին այն միտքը, որ քրիստոնյաների համերաշխությունը պետք է լինի ս. Գրքի պատգամներին համապատասխանող գործունեություն անարդարության, ցեղային խտրականության և ճնշման դեմ՝ ստեղծելու համար առավել արդար և առավել ազատ կյանք մարդկային հասարակության մեջ:

«Խաղաղության քրիստոնեական կոնֆերանս»-ի ընդհանուր քարտուղար Կարոլի Տոթ եպիսկոպոսի զեկուցումը ևվիրված էր եկեղեցիների խաղաղության շարժման սկզբնավորման և զարգացման հիմնական հարցերի քննարկմանը: Զեկուցողը մանրամասն կանգ առավ «Խաղաղության քրիստոնեական կոնֆերանս»-ի 4-րդ համաժողովից հետո ընկած ժամանակաշրջանում ԽՔԿ-ի ծավալած գործունեության վրա և ցույց տվեց, որ ԽՔԿ-ն հասել է զգալի հաջողությունների. համարյա կրկնապատկվել է նրան հարող եկեղեցիների և կրոնական կազմակերպությունների թիվը, բարձրացել նրա հեղինակությունը միջազգային կյանքում: Բացի այդ, ստեղծվել են «Խաղաղության քրիստոնեական կոնֆերանս»-ին առընթեր համանուն քույր կազմակերպություններ Ասիայում, Աֆրիկայում և Լատինական Ամերիկայում:

Վերոհիշյալ զեկուցումների շուրջ տեղի ունեցավ մտքերի լայն փոխանակություն:

Այնուհետև սկսվեց հանձնաժողովների աշխատանքը: Գործում էին չորս («Աստվածաբանական», «Տնտեսական ազատագրություն և զարգացում», «Անտի-ռասիզմ» և «Միջազգային հարցեր») հանձնաժողովներ, որոնք քննարկեցին տեսական և գործնական նշանակություն ունեցող բազմաթիվ կրոնա-բարոյական, էկումենիկ, տնտեսական և քաղաքական հրատապ խնդիրներ՝ կապված Եվրոպայի, Ասիայի, Աֆրիկայի, Լատինական Ամերիկայի և Մերձավոր Արևելքի տարբեր երկրների ժողովուրդների կյանքի հետ:

Հանձնաժողովների աշխատանքների հիման վրա համաժողովն ընդունեց մի շարք բանաձևեր ու կոչեր, որոնցում ընդգրկված էր ջերմամիջուկային կոնֆլիկտից խուսափելու, ընդհանուր և լրիվ զինաթափման հասնելու, կայուն խաղաղություն հաստատելու և սպառազինությունների համար ծախսվող հսկայական միջոցները մարդկության բարօրությանը ծառայեցնելու անհրաժեշտությունը:

Բոլոր պետությունների ղեկավարներին ուղղված դիմումի մեջ համաժողովի մասնակիցները նշեցին ԱՄՆ-ի նեյտրոնայինռումբ արտադրելու ծրագրի վտանգավորությունը և մտահոգություն հայտնեցին ժողովուրդների միջև համագործակցությանը և աշխարհի խաղաղությանը սպառնացող վտանգի համար: Խմբագրվեց նաև եկեղեցիներին և քրիստոնյաներին ուղղված կոչը, որտեղ ասված էր. «Քրիստոնյաները չեն կարող չեզոք դիրք գրավել, երբ խոսքը վերաբերում էր խաղաղությանն ու արդարությանը»: Համաժողովի մասնակիցները պաշտպանեցին Հելսինկիի համաձայնագիրը՝ նշելով, որ նրա կենսագործումը կարող է նպաստել լարվածության թուլացմանը Եվրոպայում:

«Խաղաղության քրիստոնեական կոնֆերանս»-ի 5-րդ համաժողովը ընդունեց ԽՔԿ-ի նոր կանոնադրությունը, որի համաձայն էլ տեղի ունեցան ղեկավար մարմինների ընտրությունները: ԽՔԿ-ի պատվո նախագահ ընտրվեց Լենինգրադի և Նովգորոդի միտրոպոլիտ Նիկոդիմը, նախագահ՝ եպիսկոպոս Կարոլի Տոթը (Հունգարիա), ընդհանուր քարտուղար՝ Լ. Միրեժովսկին (Չեխոսլովակիայի ավետարանական եկեղեցի):

Հիմնովին փոխվեց ԽՔԿ-ի աշխատանքը շարունակող կոմիտեի և Աշխատանքային կոմիտեի կազմը: Առաջինի անդամ ընտրվեց տ. Նարեկ եպիսկոպոս Շաքարյանը, երկրորդի՝ տիար Հովհաննես Թոփուզլանը:

Բացի համաժողովի և հանձնաժողովների նիստերից, տեղի ունեցան նաև երիտասարդական և կանանց խմբերի առանձին հանդիպումներ, ինչպես և մամուլի ասուլիսներ, ընդունելություններ և այլն՝ նպաստելով տարբեր մայրցամաքներից եկած պատգամավորների միջև կապերի ստեղծմանը:

Իր գոյության քսան տարիների ընթացքում (1958—1978) ԽՔԿ-ն զգալի չափով նպաստել է եկեղեցիների խաղաղության շարժման վերելքին, և այսօր աշխարհի տարբեր երկրներում բազմամիլիոն բարի կամքի տեր մարդիկ պաշտպանում են նրա ծավալած մարդասիրական-քրիստոնեական գաղափարները:

«Խաղաղությամբ յայս և ի սոյն ննջեցուք և հանգիցուք, զի դու Տէր միայն առանձին յուսով քով բնակեցուցեր զմեզ» (Սաղմ. Դ 9): Ամեն:

ՆԱՐԵԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՇԱՔԱՐՅԱՆ
Շիրակի թեմի առաջնորդ